ԱՍՏՂԻԿ ԵՒ ԻՇԹԱՐ ԴԻՑՈՒՀԻՆԵՐԻ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՄԱՆ ԵՒ ԿԵՐՊԱՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

Առասպելաբանութեան եւ ընդհանուր մշակութաբանութեան արդի նուաճումները թելադրում են նորովի մեկնաբանել հին եւ հնագոյն առասպելածիսական աւանդոյթում այս կամ այն աստուածութեան կերպարային յատկանիշները եւ խաղացած դերը: Հայկական դիցարանի սիրոյ եւ գեղեցկութեան դիցուհու՝ Աստղիկի կերպարը գնահատելիս մենք եւս պէտք է նկատի ունենանք երկու գործօն: Դրանցից մէկը վերաբերում է հայկական դիցարանի միւս աստուածութիւնների հետ Աստղիկ դիցուհու ունեցած կապին, նրանց փոխյարաբերութիւններին, իսկ երկրորդ գործօնը վերաբերում է այլ դիցարանների նմանաբնոյթ աստուածութիւնների հետ դիցուհու ունեցած առընչութիւններին:

Աստղիկ դիցուհին կերպարային որոշ ընդհանրութիւններ է դրսեւորում յունական Աֆրոդիտէի, հռոմէական Վենեռայի, սեմական Իշթար, Աստարտէ եւ ուրիշ դիցուհիների հետ: Այստեղ մենք կ'անդրադառնանք Աստղիկ եւ Իշթար դիցուհիների անուան ծագման, կերպարային եւ այլ համադրումներին:

Աստղիկ անունը ածանցուած է աստղ հիմքից՝ նուազական -իկ մասնիկով: Ցեղակից լեզուներում աւանդուած է մի շարք զուգահեռներով, ինչպէս՝ խէթ. ḫašter «աստղ», վեդ. stŕbhih, աւ. stərəbyo, յուն. ἀστήρ, լատ. stēlla, միջ. իռլ. ser, գոթ. stairnō, հին բ.-գերմ. sterno, հին անգլ. steorra, հին իսլ. stjarna[1]: Աստղ բառն ունի հնդեւրոպական ծագում[2]: Սակայն հնդեւրոպական նախալեզուի բուն նախաձեւի ծա-

---

1 Friedrich J., Hethitisches wöten für'stern' und'star', 11, Heidelberg, 1969 C.Watkins, Indo-european star 1974.

2 ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայերէն արմատական բառարան, *հտ.I, Երեւան, 1971, էջ 278:*

գումնային բնոյթը լիովին պարզ չէ, արդեօք այն բնի՞կ է, թէ փոխառուած է սեմական ինչ-որ հնագոյն աղբիւրից[3]:

Թ. Գամկրելիձէն եւ Վ. Իվանովը, յենուելով յատկապէս խէթերէնում արձանագրուած ḫašter «աստղ» բառի վրայ, վերականգնում են հնդեւրոպական *Haster նախաձեւը եւ հաւանական համարում հնդեւրոպական նախալեզուից սեմականին անցումը: Ցստակ է, որ սեմական որոշ հին լեզուներում գործածուել են նմանաբնոյթ անուններ (աքադ. Ištar, հին եբր. 'aštöret,, փիւնիկ, štrt,, հարաւ- արաբ. ṯtr), որոնցից վերականգնւում է ընդհանուր սեմական *aṯtar ձեւը՝ «աստղային աստուածուհիւն», «այդաբացի աստուածացուած աստղ» նշանակութիւններով[4]:

Միջագետքեան Իշթար անուան ծագման մասին գիտնականները տարակարծիք են: Ըստ Լագրանդի, Դահուդի, Մոսկատիի, Հոֆների եւ այլոց, այն սեմական ծագում ունի, թէեւ անուան ստուգաբանութեանը նրանք չեն դիմում: Ռիւկմանսն անուանը վերագրելով շումերական ծագում, նշում է, որ գոյութիւն ունի սեմական ծագման երկու արմատ՝ ṯr եւ ġtr, որոնք կարող են առընչուել Ištar անուան հետ. դրանք երկուսն էլ գործածական են եւ ունեն «առատ լինել, լիանալ» եւ «ուռոգել» իմաստները: Նրա կարծիքով, ընդհանուր առմամբ, այդ բոլոր ստուգաբանական ջանքերը մնում են սոսկ ենթադրութիւններ[5]:

Աստղիկ անուան ծագման մասին արտայայտուած տեսակէտները հայագիտութեան մէջ երկփեղկւում են: Անուան ասորական ծագման կամ՝ աւելի ճիշտ, այդ լեզուից պատճէնուած լինելու կողմնակիցները (Հ. Գելցեր, Մ. Աբեղեան, Ա. Մատիկեան, Գ. Ղափանցեան եւ ուրիշ), կարծում են, որ այն ասորական Kaukabṯā բառի թարգմանութիւնն է, թէեւ նրանց փաստարկները զուտ լեզուական բնոյթի չեն, այլ աւելի՝ առասպելաբանական եւ պատմական. նրանք յենւում են Տարօնի շրջակայքը հին ժամանակներում սեմական ցեղերով բնակեցուած լինելու հանգամանքի վրայ:

Ճիշտ է, արամէական ցեղերը դեռ մինչեւ ուրարտական պետու-

---

3 Т.Гамкрелидзе, В.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, 1984, с. 685-686, 6861, 875, 8751:

4 HENINGER J. *Zum Problem der Venussterngottheit bei den Semiten, Antropos, International review of Ethnology and linguistics*, v. 71, 1976.

5 Տե՛ս Գամկրելիձէ-Իվանովի նշուած աշխատանքը:

թեան կազմաւորումը հաստատուել էին հիւսիսային Միջագետքում, սակայն ոչ մի փաստարկ չունենք այն բանի օգտին, որ հարաւ-արեւմտեան Հայաստանի, մասնաւորապէս Տարօնի եւ Սասունի տարածքը բնակեցուած է եղել զուտ արամէական ցեղերով: Բացի այդ, խէթերէնում ḫašter-ի առկայութիւնը հաստատում է, որ արեւմտափոքրասիական եւ, ըստ երեւոյթին՝ նաեւ Հայկական բարձրաւանդակի տարածքում՝ արամէացիների յայտնուելուց դեռեւս հարիւրամեակներ առաջ, գործածութեան մէջ է եղել յիշուած բառոյթը եւ դրա անցումը սեմական լեզուներից հնդեւրոպականին խիստ կասկածելի պէտք է համարել:

Հայագիտութեան մէջ արտայայտուած երկրորդ տեսակէտը պատկանում է Հ. Աճառեանին, որը յստակ եւ անվերապահ շեշտում է անուան հայկական ծագումը, հիմք ունենալով աստղ բառը[6]: Նա իրաւացիօրէն առանձնացնում է Աստղիկ անունն ասորական Kaukabta-ից եւ դրանք դիտում որպէս սոսկ դիցապաշտական համապատասխանութիւններ:

Աստղիկ դիցուհու անուան բնոյթը պարզաբանելու համար արժէ դիմել Լուսաստղի (այգաբացի աստղի) անունների տարածական բաշխմանը՝ տարբեր ցեղակից եւ ոչ ցեղակից լեզուներում: Լուսաստղի անունը տարափոխոխ է: Հին յունարէնում, հին իսլանդերէնում եւ հին բարձր գերմաներէնում անունները սերում են հնդեւրոպական *prai «սիրել» արմատից եւ համապատասխանաբար ներկայացնում են Ἀφροδίτη, Frigg եւ Frija ձեւերը, լատիներէնում եւ հնդկերէնում անունները յենւում են «հաճոյք. հմայք» իմաստոյթների վրայ, համապատասխանաբար՝ Venus եւ vanas: Մի շարք այլ լեզուներում Լուսաստղի անունը յենւում է «լոյս» կամ «փայլ» իմաստոյթների վրայ՝ յուն. Ἑωσφόρος եւ Ἑωσφρός (Ἕσπερος), հին հնդկ. svēta (ratha)-, Bhārgava- եւ այլն:

Դառնալով Աստղիկի եւ Իշթարի կերպարային զուգադրմանը, նշենք, որ ասորա-բաբելական դիցարանի գլխաւոր աստուածուհին, լուսնի աստծու՝ Սինի դուստրը եւ Շամաշի քոյրը, որոշ զուգահեռ գծեր է դրսեւորում հայկական Աստղիկի, Արամազդի դստեր եւ Վահագնի քրոջ, հետ: Իշթարի հիմնական գծերն են եղել սիրային տարփանքը, պտղաբերութիւնը եւ ռազմատենչ ոգին: Իշթարի սիրոյ եւ պտղաբերութեան յատկանիշը, ըստ տեսակէտներից մէկի՝ ժառան-

---

6 ԱՃԱՌԵԱՆ Հ., Հայոց անձնանունների բառարան, Երեւան, 1943, հ. 1, էջ 232:

գուած է շումերական Ինաննայից, որն իր գլխաւոր սրբավայրում Ուրուկում, յատկապէս պաշտամունքի է արժանացել ցոփ եւ չուայտ կեանք վարող տարփուհիների միջավայրում: Նրան են նուիրուել յատուկ տաճարներ եւ բազմաթիւ սրբատեղեր: Ինաննայի մականուններից են եղել «սիրոյ տիրուհի» եւ «զուարճութեան թագուհի» յորջորջումները, ուր ըստ էութեան գնահատել են նրա պաշտամունքային դերը: Նշուած գծերն աւելի ուշ փոխանցուել են աքադական Իշթարին, նա նոյնպէս ունեցել է բազմաթիւ պաշտամունքային վայրեր, որոնցից հիմնականներն են եղել Արբելան, Նինուէն, Բիտ-կիտմուրին եւ Բաբելոնը[7]: Նոյն այդ յատկանիշներն է ցուցաբերում Աստղիկը հայկական դիցարանում, թէեւ պաշտամունքի հետքերը սակաւ են:

Սեմական ժողովուրդների մէջ Իշթարը յաճախ արական գործառոյթներով է օժտուել: Այդպիսին են նրան ճանաչել արամէացիները եւ հարաւային արաբները[8]: Իսկ ուգարիթեան առասպելներում Իշթարը բնութագրւում է երկսեռութեամբ, որոնցից արականը կրել է b'Ariz «փեսացու» մականունը: Նոյն կերպ են վերաբերուել Իշթարին նաեւ Մարիում, որտեղ նա օրհներգներից մէկում բնորոշւում է իր մօրուքաւոր արտաքինով[9]:

Իշթարի արական եւ իգական բնոյթի յատկանիշները լրացնում են մէկը միւսին եւ դժուար է յստակ որոշել դրանցից իւրաքանչիւրի նախնականութեան հարցը ինչը կարօտ է մանրազնին լուսաբանման՝ նոր փաստարկների ներգրաւմամբ: Այնուամենայնիւ, կարելի է արժանահաւատ համարել այն, որ շատ վաղ ժամանակներում Իշթարը՝ երբեմն որպէս իգական, երբեմն էլ որպէս արական է ըմբռնուել: Այդ խնդրի կապակցութեամբ գոյութիւն ունեցող տեսակէտները կիսւում են: Ոմանք ընդունում են, որ այն կապուած է երկսեռութեան վաղնջագոյն պատկերացումների հետ, այսինքն՝ նախկինում միաձոյլ (սինկրետիկ) աստծու գոյութիւնն է շեշտւում, միւսները կարծում են, որ ի սկզբանէ արականը եւ իգականը առանձնացուած են եղել, ըստ որում արականն աղերսուել է Լուսաստղի, իսկ իգականը՝ Գիշերավարի հետ եւ շատ աւելի ուշ դրանց նոյնութիւնը հաստատուելով, այդ երկուսը միաձուլուել են մէկ միասնութեան մէջ[10]:

---

7 RINGGREN, *Die Religionen das Alten Orient*, München, 1976, 122.

8 W. EILERS, *Sinn und Herkunft der Planetennamen*, München, 1976, S.56.

9 RINGGREN, նշուած աշխատանքը։

10 HENINGER, նշուած աշխատանքը, 122։

digitised by

Հայկական Աստղիկը եւս ունեցել է արական դրսեւորում, մասնաւորապէս «Սասնայ ծռեր» ժողովրդական վէպում յանձինս Աստղիկ Պարոնի[11] *կերպարի: Նա իր սեմական կին զուգահեռի նման վիպական մակարդակում հանդիսացել է հին սեմական արական աստծու՝ Ադթերի հայկական զուգորդը, որը հաւանաբար Սասնայ տան վէպի վրայ սեմական վիպական աւանդութեան ազդեցութիւն կարող է լինել:*

Իշթարի արական սկզբի հետ ուղղակիօրէն առընչւում է նրա ռազմի բնաւորութիւնը, որին յատկապէս մեծ տեղ է տրուել Ասորեստանում: Նա դիտուել է որպէս թագաւորական բանակները յաղթանակի առաջնորդող աստուածուհի: Համմուրաբիի օրէնսգրքում նա դիտուել է որպէս իրաւական վէճերի եւ գժտութիւնների հաշտեցնող տիրուհի, յաջողութեան գրական: Ի հեճուկս թշնամիների՝ Իշթարը սպառնացել է նրանց՝ պատերազմների սանձազերծմամբ, արիւնահեղութեամբ եւ յեղաշրջումներով: Ասորեստանի տիրակալները անուանել են նրան «վէճերի դատաւոր», «թշնամիներին չխընայող» եւ մշտապէս ապաւինել են նրան[12]*: Այդ կապակցութեամբ տեղին է յիշել Աստղիկի*[13] *հաշտարար դերը Նոյի որդիների՝ Զրուանի (Սեմի), Տիտանի (Քամի) եւ Հապետոսթէի (Հաբեթի)՝ իր եղբայրների միջեւ գժտութիւնը վերացնելու պարագայում: Զրուանը փորձում է իր որդիներին թագաւոր կարգել բոլորի վրայ, սակայն Տիտանը եւ Հապետոսթէն ընդդիմանում են եւ դաւ նիւթում նրանց դէմ: Աստղիկը միջամտում է եւ հաշտեցնելով երկու կողմին՝ Զրուանի փընրկուած որդիներից մի քանիսին ուղարկում է արեւմուտք՝ Օլիմպոս լեռը*[14]*: Նա ոչ միայն կասեցնում է ահազնացող վէճը, այլեւ տնօրինում է նրանց յետագայ ճակատագիրը:*

---

11 *Պարոնը, ինչպէս կը բացատրուի մի այլ տեղում, թերեւս արտացոլում է հ.-ե.* Peruna-*ին՝ կայծակ-որոտի մի երկսեռ աստուածութեան:*

12 А.Оппенхейм, Древняя Месопотамия, Москва,1990, с. 162-163.

13 *Նոյի դստեր, Աստղիկի մասին, որը ծնուել է ջրհեղեղից յետոյ, մենք տեղեկանում ենք միջնադարեան մի շարք աղբիւրներից՝ Ցայսմաւուրքից* (Ցայսմաւուրք, *Կ.Պոլիս, 1730, մայիսի 17, էջ էճհդ),* ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐՈՒ *«Ժամանակագրութիւնից»* (Տեառն Միխայէլի Պատրիարքի *Ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1870): Իշթարը նոյնպէս առընչւում է ջրհեղեղի աւանդութեանը: «Գիլգամէշ» դիւցազնավէպում (11-րդ աղիւսակում) նկարագրւում է, թէ ինչպէս եր Իշթարը ողբում, եւ «արցունքները հոսում էին» ջրհեղեղի ժամանակ: Այդ օրուանից Անու աստծու կողմից Ուտնապիշտիմ-Կսիսուտրոս-Նոյը եւ իր կինը հաւասարեցւում են աստուածներին* ("Эпос о Гильгамеше", М.-Л., 1961, с. 260)*:*

14 ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՑ Մատենագրութիւն, Պատմութիւն Հայոց, *էջ 16:*

Վէճերի տեղիք է տալիս նաեւ Իշթարի ի սկզբանէ աստղային աստուածութիւն լինելու տեսակէտը: Իշթարի աստղային բնոյթի դիցուհի լինելու հանգամանքը, թերեւս, առաւել մեծ շեշտադրում է ստանում արամէական ցեղերի (քաղդէացիների) հրապարակ իջնելուց յետոյ: Ինչպէս յայտնի է, քաղդէացիները մեծ աւանդ ունեն աստղաբաշխական եւ հմայական մշակոյթի առաջընթացի հարցում: Իշթարի՝ Վեներայի հետ ունեցած նոյնութիւնը վկայուած է յատկապէս դիցաբանական բնոյթի բնագրերում եւ առասպելներում:

Իշթարն առընչւում է մահկանացուների ճակատագրի տնօրինման հետ: Շումերական եւ վաղ հին բաբելոնեան թագաւորական արձանագրութիւններից յայտնի է, որ անհատները անմիջական սերտ կապի մէջ են եղել իրենց պահապան ոգիների հետ, ըստ նրանց հաւատալիքային պատկերացումների: Արքունի տան անդամները եւ ինքը թագաւորը նոյնպէս կապուած են եղել դիցարանի աստուածների հետ: Մասնաւորապէս թագաւորի համար Իշթարը եղել է անձնական բարօրութեան երաշխաւորը: Իշթարը հանդիսացել է թագաւորի իշխանութեան հովանաւորը, նրա բախտաւորութեան աղբիւրը եւ առընչւում է հռոմէացիների fortuna regia յորջորջմանը[15]*:*

Ըստ երեւոյթին, նոյն այդ յատկանիշներն է ցուցաբերում Աստղիկը հայկական դիցարանում, իսկ արքունի տան այդ կարգի կապուածութեան մասին հանդէպ Աստղիկ դիցուհին հաղորդում է Հայր Ղ. Ալիշանը, իր «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» *աշխատութեան մէջ: Հայր Ալիշանի հաւաստմամբ, Արտաշէս Բ-ն իր ընտանիքով շատ էր կապուած աստուածուհու պաշտամունքի հետ, իսկ Աստղիկի հանդէպ նրա տիկնոջ՝ Սաթենիկի սիրոյ մասին ասում է, որ նա չկարողացաւ ազատուել Աստղիկի պաշտամունքից անգամ քրիստոնէութեան ընդունումից յետոյ ու շարունակում էր երկրպագել մեր այս աստուածուհուն եւ զբօսատեղի էր ընտրել Վանից հարաւ ընկած Արտամետ քաղաքի մօտակայքում տեղադրուած դիցուհու արձանի ու մեհեանի ստորոտները*[16]*:*

Այսպիսով, Աստղիկի եւ Իշթարի կերպարային համապատասխանութիւնները յանգում են հետեւեալին.

---

15 А.Оппенхейм, Древняя Месопотамия, Москва, 1990, с. 162.

16 Ղ. ԱԼԻՇԱՆ, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, *Վենետիկ, 1895, էջ 280*

✦ *Աստղիկը եւ Իշթարը սիրոյ աստուածուհիներ են,*

✦ *Երկուսի անուններն ածանցուած են աստղ-star հիմքից եւ նրանց անուան ստուգաբանութիւնների թւում իշխում է սեմականից ծագելու տեսանկիւնը:*

✦ *Նրանք երկուսն էլ աստղային բնոյթ ունեն եւ ներկայացնում են համապատասխան երկնային լուսատուն:*

✦ *Դիցուհիները հանդիսացել են իբրեւ վէճերի հաշտեցնող եւ արքունի տան անդամների առանձնայատուկ պաշտամունքի առարկայ:*

✦ *Երկուսն էլ ռազմատենչ են եւ դրսեւորում են երկսեռ յատկանիշներ:*

ԵՐԱՆՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄՈՒՐԱԴԵԱՆ

Comparisons in the Origin of the Names and the Images of the Goddesses Ishtar and Astłik

(Summary)

Yeranouhi Melik-Mouradian

The comparative study of the images of the goddesses of love - the Armenian Astlik and the Mesopotamian Ishtar - cumulates in the following conclusion: the goddesses show multiple common points. The names Astłik and Ishtar are derived from the synonyms "astłik" and "star" and studies into interpretations of these names show the prevalence of Semitic origin. Both of them have a stellar nature and are presented as the corresponding celestial luminaries (Morning Star, the Star of Dawn). The goddesses have been shown as reconcilers in quarrels and as members of the royal house worthy of special worship. Both have been shown to have belligerent and bisexual features.